ԽԱՉԱՏՈՒՐ ԵՒ ԵՂԻԱԶԱՐ

ՎԵՀԱՁՆԵԱՑ ԻՇԽԱՆՔ ԼԱԶԱՐԵԱՆՑ

Հեռագիրն գուժեց, զի Վ. սեմափայլ Խաչատուր և Եղիազար իշխանք Լազարեանց մահկանացու կենաց ընթացքները կնքեցին՝ առաջինն 29-ն ամսոյս ի Ս. Պ. Բուրգ, և միւսն՝ ի 14-ն անցեալ Հոկտեմբեր ամսոյ ի Պրիւսէլ մայրաքաղաքն Պէլճիոյ, որով ի խոր սուգ համակեցին զընտանիսն և զազգականսն, և ոչ սակաւ տրտմութեանց առիթ եղան համայն եռանդուն և զգայուն Հայորեցոյն։

Պարտուպատշաճ մեծարանօք և մեծահանդէս յուղարկաւորութեամբ Աղայ Խաչատրոյ հանգուցելոյ մարմինը ամփոփելոյ համար ի դամբարանի նախնեաց՝ Վ. Եհ. Հայրապետն հեռագրեց Հոգևոր Կառավարութեան Ս. Պետերբուրգի։

Լազարեանց հռչակաւոր տոհմին նախնեաց անզուգական բարերարութիւնք և երախտիք՝ մանաւանդ Լազարեանց անուանեալն Հայոց մեծ Հ՚եմարանն՝ Ս. Պ. բուրգոյ և Մոսկվայի Հայոց Եկեղեցիք — որք նոցին առատաձեռն և մեծագումար նպաստից և նուիրաբերութեանց անմահ կոթողք են, — գրեթէ համայն Հայ ազգիս երախտագիտութիւն և համակրութիւն գրաւած են յինքեանս, որոց և արժանաւոր ժառանգք և սերունդք յաւէտ մեծ պատուով և ակնածութեամբք մեծարուած են ի Հայկազանց, և ի նշան եռանդուն համակրութեանց և շնորհապարտութեանց՝ լուսահոգի Ս. Հայրապետք մեր թէ Լազարեանց Հ՚եմարանի և թէ Եկեղեցեաց Հոգաբարձութիւնքը ըստ ամենայնի յանձնած էին Լազարեանց տոհմին որդւոց յորդիս, որոց դժբաղտաբար վերջինք եղան հանգուցեալ Խաչատուր և Եղիազար Իշխանքն։

Յիշեալ երկուց հանգուցելոց անձնական արժանիք և բարեմասնութիւնք բազում են, պատուեալ յազգայնոց և օրհնութեան Կոնդակօք Ս. Կաթողիկոսաց, և պերճացեալ քաղաքական աստիճանօք, և զանազան տէրութեանց շքանշանօք՝ ի տրիտուր բարի գործոց և աշխատութեանցն։

Ուստի ի 19 ամսոյս յաւուր Կիւրակէի զկնի Ս. Պատարագի Վ. Եհ. Կաթողիկոս կատարեց մեծահանդէս հոգեհանգստեան պաշտօն ընդ համայն ուխտի միաբանութեանս վասն հոգւոց հանգուցեալ իշխանացն, յորում աւուր և Ս. Պատարագն յատկապէս մատուցաւ ի Ս. Սեղան Եջման Տեղւոյ։

Բարեմաղթեմք՝ զի Բարերարն Աստուած լուսաւորեսցէ զՀոգիս հանգուցելոցն՝ արժանաւորելով երանաւէտ անմահ կենաց և անթառամ վայելչութեանց երկնից Ս. Երբայութեան։

Հոգին Սուրբ մխիթարիչ լեցի Աղնուափայլ Տիկնոջն՝ Համեստափայլ Դստերացն և Պերճափառ փեսայիցն և համայն սգազգեաց ընտանեացն։